# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 93- Ա 22 մարտի 2019 թ

## ԿԱՐԵՆ ՋԱՂՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆ ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ, ՀԱԿՈԲ ՂՈՒԼՈՅԱՆԻՆ, ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԱ ՀԱՅԿԱԶՅԱՆԻՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ ու 209-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանելու մասին» N 1239-Ն որոշումը

կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, սպորտի և մշակույթի վարչության պետ Կարեն Ջաղյանին, քաղաքաշինության վարչության պետ Արմեն Զոհրաբյանին, ներքին աուդիտի բաժնի վարիչ Հակոբ Ղուլոյանին և նույն բաժնի գլխավոր մասնագետներ՝ Գագիկ Հովհաննիսյանին, Արա Հայկազյանին 2019 թվականի մարտի 22-ին, մեկ օրով գործուղել Վարդենիսի տարածաշրջան՝ մարտի 23-ի շաբաթօրյակի նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու համար:

2.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Գավառ